ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 1 20. 01. 2016թ.

Գ. Եղեգիս
Հեռ. 24186

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 12 հոդվածի 4-րդ մասով համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նիստի օրակարգը հետևյալ հարցերով
1.Թիվ 1 նիստի օրակարգը հաստատելու մասին:
2.Համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2015թ բյուջեի կատարման մասին
3.2016թ համար տեղական տուրքերի և վճարների սահմանում
4. Համայնքի 2016թ բյուջեի քննարկում

Համայնքի ավագանիներ՝	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
1. Ա.Մանուկյան Հրաչիկ			
2. Հովհաննիսյան Մուրադ			
3. Հակոբյան Ռոբերտ			
4. Հարությունյան Էդգար			
5. Մանուկյան Գեորգ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ.ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N2-Ձ 20.01. 2016թ. գ.

Եղեգիս
Հեռ. 24186

2015թ. ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ղեկավարի2015թ. բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը համաձայն սույն որոշման հավելվածի:

Համայնքի ավագանիներ՝	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱԿ
1. Վահագն Հովհ-ն			
2. Հովհաննես Մկրտչ			
3. Հայկազուն Սմբատ			
4. Հարությունյան Էդգար	բացակա		
5. Մանասերյան Ցերուկ	բացակա		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ԱՐՏՅՈՒՆՅԱՆ

Եղեգիսի գ/պ 2015թ տարեկան բյուջեի կատարման մասին հաշվետվություն

Եկամուտներ հազ. դրամ

	Նախատեսված	կատարված
Գույքահարկ	417.5	865.0
Հողի հարկ	600.0	598.0
Հողի վարձավճար	200.0	171.0
Ակտիվների օտարում		100.0
Դոտացիա	8161.0	8161.0
Տեղական տուրքեր	12 .0	33.0
Տարեսկզբի մնացորդ	2671.1	ընդամենը 9928.0
Ընդամենը	12061.6	

Ծախսեր հոդված-գումար. հազ.դրամ

4111	8452.3	5113	200.0
4112	660 .0	5129	960.0
4212	470.0		
4214	100.0	Ընդամենը ծախս.	11646.9
4215	42.7	Մնացորդ	1672.5
4234	42.0	Վարչական	787.7
4239	85.0	Ֆոնդային	884.8
4241	33.0		
4252	64.0		
4261	60.0		
4264	100.0		
4267	40.0		
4269	120.0		
4823	12.0		

Համայնքի ղեկավար՝ Յու. Սարգսյան

հաշվապահ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Եղեգիս

ՈՐՈՇՈՒՄ N3-Ն 20.01.2016թ.

0281-24186

2016Թ. ՀԱՄԱՐ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով ..Տեղական ինքնակառավարման մասին.. ՀՀ օրենքի 16 հոդվածի 18-րդ կետով ..Տեղական տուրքերի և վճարների մասին.. ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք՝ սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 դրամ,

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20 000 դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 40 000 դրամ,

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի

ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է, միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, բազաբաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1,500-դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 100 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ.

գ) իրանոթներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000 դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 3000 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ.

դ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000- դրամ.

ե) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը՝ ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 դրամ:

5[1]. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «ժ» ենթակետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը՝ սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝տեղական տուրքը՝ ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

7. Համաբաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և բաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝տեղական տուրքը՝ ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 0 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի՝ տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային ապիրտի պարունակություն մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (ապիրտի պարունակություն 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենները և կրկնօրինակները տրամադրելու համար՝ տեղական տուրքը՝ ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1 000 դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը՝ ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50 000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը՝ ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5000 դրամ:

10.1. Համայնքի տարածքում բաղաքացիական հոգևհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար՝ տեղական տուրքը՝ ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50 000 դրամ:

11. Սույն հոդվածով (բացառությամբ 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի) սահմանված դրույքաչափերի վերին սահմանները քաղաքային համայնքներում կարող են լինել 1.5, իսկ Երևան քաղաքում՝ 3.0 անգամ ավելի:

11[1]. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված

սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային համայնքներում հաշվարկվում են 0.3, գյուղական այլ համայնքներում՝ 0.5, քաղաքային այլ համայնքներում՝ 1.0, իսկ Երևան քաղաքում՝ 7.0 գործակիցների կիրառմամբ

12.Ամուլի վաճառքների մասնակցության վճար սահմանել 4000 դրամ

Համայնքի ավագանիներ՝ ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ

1 Պետրոսյան Գագիկ

2 Հովհաննիսյան Պետրոս

3 Եսայանյան Սուքիաս

4 Հարությունյան Էդգար

5 Մանուկյան Գեորգ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N4-Ղ 20.01.2016թ.

Գ. Եղեգիս
Հեռ. 24186

2016Թ. ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Եղեգիս համայնքի 2016թ.-ի տարեկան բյուջեն, որը կազմում է 11919,5 ՀՀ դրամ եկամտային և ծախսային մասերով, որից 11034,7 հազար դրամ վարչական և 884,8 հազար դրամ ֆոնդային մասերով:

Եկամուտներ հազ. դրամ

հողի հարկ-600,0
գույքահարկ-680,0
հողի վարձավճար -300,0
տեղական տուրք-20,0
դոտացիա-8647,0
տարեկան մնացորդ -1672,5 որից ֆոնդային 884,8, 787,7 վարչական
Ընդամենը եկամուտներ -11919,5

Ծախսեր հազ. դրամ

4111-աշխ. 8887,0
4112- 721,0
4212-ներք. Ծախ-398,0
4214-կապ-120,6
4215-ապահովագրում-45,0
4221-գործուղում-20,0
4234 տեղեկատվական ծառայություն-15,0
4235-կառավարչական ծառայություն-60,0
4239-ընդհանուր բնույթի ծառայություն-85,0
4241-մասնագիտական ծառայություն-50,0
4252-մեքենաների սարք.-ի նորոգում-70,0
4261-գրասենյակ. նյութեր-50,0
4264-տրանսպորտային նյութեր-126,0
4267-կենցաղային և հանրային սննդի նյութեր-30,0
4269-հատուկ նպատակային այլ նյութեր-120,0
4729-սոց. օգնություն-200,0

4823-պարտադիր վճար-37,1

5113- շենքերի շինությունների կապիտալ նորոգում-884,8

Ընդամենը ծախսեր 11919,5(տասնմեկ միլիոն ինը հարյուր տասնինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ

Համայնքի ավագանիներ՝	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
1.			
2.			
3.			
4.			
5.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՍԿՐՏՉՅԱՆ